ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

РЕСПУБЛИКА АРЦАХ

АППАРАТ МИНИСТЕРСТВА
ОХРАНЫ ПРИРОДЫ И
ПРИРОДНЫХ РЕСУРСОВ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ
ГОСУДАРСТВЕННАЯ ИНСПЕКЦИЯ ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР

(0479) 7-05-44
ք.Ստեփանակերտ, փող. Ա.Առաքելյան 14-գ ☎ г. Степанакерт, ул. А.Аракелян 14-г

31

ՈՐՈՇՈՒՄ N 31

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Ստեփանակերտ «23» հուլիսի 2019 թ.

Ես՝ Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության պետի պաշտոնակատար Ռաֆիկ Վլյաթի Մաթևոսյանս, քննելով 2019թ. հուլիսի 22-ին ջրօգտագործման թույլտվության կանոնների խախտման փաստով «Պրոտոն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Հակոբ Աղասի Մաթիյանի նկատմամբ N 24 առ 08.07.2019թ. որոշմամբ հարուցված վարչական գործը, համաձայն նախարարի թիվ 10 Ա առ 07.02.2019թ. հրամանի և տեսչության պետի N 15 առ 07.06.2019թ. հանձնարարագրի կատարված ստուգումների արդյունքում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ իրականացված ստուգումների արդյունքներով կազմված N 22 առ 10.06.2019թ. ստուգման ակտ, ինչպես նաև այլ նյութերը.

## Պարզեցի

«Պրոտոն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Հ.Ա.Մաթիյանը բացատրություն է տվել, որ նախարարության կողմից թիվ 1.5-5/265 առ 07.02.2019թ. և 1.5-5/1018 առ 13.05.2019թ. ուղարկված գրությունների պահանջները, որ «Սյունիք 2» ՓՀԷԿ-ի ջրառի կետերում ապահովել ջրաչափական դիտակետով, չի կարողացել տեղադրել տեխնիկական պատճառներից ելնելով ու հետագայում եթե հնարավորություններ ստեղծվեն այդ դեպքում հարցին լուծում կտրվի: Բացի դրանից, ընկերության կողմից նախարարությանը չի ներկայացրել ջրառի ծավալների հաշվառման համար բնապահպանական և բնօգտագործման վճարների վերաբերյալ հաշվետվություն:

Վերոնշյալ երկու դեպքերով ընկերության կողմից խախտվել է N ԲՌ-110 ջրօգտագործման թույլտվության 13-րդ կետի առաջին և երկրորդ ենթակետերի պահանջները, այսինքն՝ նրա արարքում առկա են «Վարչական Իրավախախտման Վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի $63^2$-րդ հոդվածի 2-րդ մասի և $169^4$-րդ հոդվածի հատկանիշները:

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի 35 րդ հոդվածի 2-րդ մասի և $63^2$-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Պրոտոն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Հ.Ա.Մաթիյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարով վարչական տուգանք:

Սույն որոշումն ստանալուց հետո, 15 օրվա ընթացքում խախտում թույլ տվող անձը պարտավոր է նշված գումարը փոխանցել Արցախի Հանրապետության պետական բյուջե՝ **խումբ 24, ենթախումբ 6** 915005240618/52 հաշվարկային հաշվին:

2. Տուգանքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչություն՝ հետևյալ հասցեով՝ ք. Ստեփանակերտ Ա. Առաքելյանի 14-Գ:

3. ԱՀ Բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարին ներկայացնել միջնորդություն «Սյունիք 2» ՓՀԸԿ-ի ջրօգտագործման թույլտվության գործողության կասեցման վերաբերյալ՝ մինչև N ԲՌ-110 ջրօգտագործման թույլտվության 13-րդ կետի պահանջների ապահովումը:

Արցախի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 287 և 288 հոդվածների համաձայն, սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադաս մարմին(վերադաս պաշտոնատար անձին) կամ դատական կարգով՝ որոշումն ընդունելու օրվանից 10 օրվա ընթացքում:

**Պետի պաշտոնակատար** **Ռ.Վ.Մաթևոսյան**